ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 06/26227 «26» 10 2021 թ.

«ՄԱՍՏԵՐ ՍԹԱՅԼ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի միջև 29.04.2021 թվականին կնքած «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/124» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համայնքային ծառայողների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով նախատեսված է եղել Համայնքային ծառայողների վերապատրաստումը ընդհանուր և իրավական հարցերի բնագավառի վերաբերյալ ծառայության մատուցումը: Համաձայն տեխնիկական բնութագրի մասնագիտական ուսուցման ծրագրի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր առնվազն 72 ժամ, սակայն ընկերության կողմից մատուցած ծառայությունները չեն համապատասխանել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պայմաններին (դասընթացը չի գերազանցել 32 ժամը), ինչը փաստում է վերապատրաստման գործուղված աշխատակիցների բացատրագրերը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՄՌԿ վարչության մրցույթների և ատեստավորման կազմակերպման

բաժնի պետի սույն թվականի հոկտեմբերի 19-ին կատարած այցը «Մաստեր Սթայլ» ընկերություն վերապատրաստման դասընթացի ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3.1 կետի «ա» ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրեսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի, պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն 625.000 ՀՀ դրամի չափով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մյիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «ՀայէԿոնոմբանկ»

և 62.500 հհ դրամ) Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմնի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կատարող՝ Ս.Սարգսյան
Գործերի կառավարման և
սպասարկման վարչություն
011 511 235